Հայաստանի Հանրապետությունում վրանային ճամբարների զարգացման դերը ներքին եվ ներգնա զբոսաշրջության մեջ

Մկրտչյան Ս. Ա.
Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան, էլեկտրոնային ուսուցման և ռեսուրսների բաժին (Հայաստան, Երևան)
serzh096@gmail.com

Վճռորոշ բառեր՝ վրանային ճամբարներ, զբոսաշրջային նորարարություն, ներքին զբոսաշրջություն, քեմփինգը Հայաստանում

Роль развития палаточных лагерей во внутреннем и въездном туризме в Республике Армения

Мкртчян С.А.
Ереванский государственный университет языков и социальных наук имени в. Я. Брюсова, отдел электронного обучения и ресурсов (Армения, Ереван)
serzh096@gmail.com

Резюме: В настоящее время на территории Республики Армения есть несколько палаточных лагерей, которые оказывают существенное влияние на развитие области или регионального экотуризма, пешеходного туризма и горного туризма. Речь идет о палаточном лагере, который строится во время непрерывного туристического сезона, который можно рассматривать как инновацию, поскольку такие инфраструктуры были созданы со второй половины 2018 года. В работе представлены изучение стиля работы существующих палаточных городков, их целевой группы, ценовой политики и местоположения, перспективы, важность и роль такой инфраструктуры в экотуризме, походном туризме и горном туризме.
Ключевые слова: Палаточные лагеря, туристические инновации, внутренний туризм, кемпинг в Армении

The Role of Development of Tent Camps in Inner and Incoming Tourism in the Republic of Armenia

Mkrtchyan S.A.
Yerevan Brusov State University of Languages and Social Sciences, e-learning and resources department (Armenia, Yerevan)
serzh096@gmail.com

Abstract: Nowadays in the territory of Republic of Armenia we have some tent caps, wich have a significant impact on the development of ecotourism, hiking tourism and mountain tourism of the region or district. It is about tent camp which functions during whole touristic season and can be considered as an innovation as such infrastructures have been created since the second half of 2018.Studying the working style of existing tent camps, their target group, pricing policy and location i am presenting the perspectives, the importance and role of such infrastructures in ecotourism, hiking tourism and mountain tourism in this work.
Keywords: Tent camps, tourism innovation, inner tourism, camping in Armenia

Ինչպես արտագնա և ներգնա զբոսաշրջությունը, այդպես էլ ներքին զբոսաշրջությունը՝ վերջին տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում գրանցել է կայուն աճի ցուցանիշներ: Ներքին զբոսաշրջության պարագայում, վիճակագրական տվյալների հավաքագրման մեխանիզմը լիարժեք և ամբողջական արդյունավետություն չի ապահովում, սակայն, անգամ ունեցած ցուցանիշները թույլ են տալիս եզրակացնել, որ Հայաստանի Հանրապետությունում ներքին զբոսաշրջիկների քանակը գնալով մեծանում է, և նորարությունները միայն կնպաստեն այդ գործընթացին [1]: Հոդվածում, որպես նորարարություն, ներկայացված է ամբողջ զբոսաշրջային սեզոնի ընթացքում գործող վրանային ճամբարների ենթակառուցվածքների ստեղծումը: Իհարկե այսպիսի ճանբարներ արդեն իսկ կան Հայաստանում, որոնց մեծ մասը զբոսաշրջիկների առաջ իրենց դռները բացել են անցած՝ 2018 թվականից, սակայն դրանց քանակը շատ քիչ է: Ներքին զբոսաշրջության այցելությունների մասին վիճակագրական տվյալները, որոնք ստացել ենք զբոսաշրջութ-

յան վարչությունից 2018թ. դեկտեմբեր ամսին, հետևյալն են՝

2016 թ. *հունվար-դեկտեմբեր* ամիսների ընթացքում այցելել է շուրջ 979.968 զբոսաշրջիկ. հանգստի կամ ժամանցի նպատակով զբոսաշրջիկների քանակը 696.582-ն է.

2017թ. *հունվար-դեկտեմբեր* ամիսների ընթացքում այցելել է շուրջ 1.086.707 զբոսաշրջիկ. հանգստի կամ ժամանցի նպատակով զբոսաշրջիկների քանակը 742.188-ն է.

2018թ. *հունվար-սեպտեմբեր* ամիսների ընթացքում այցելել է շուրջ 964.656 զբոսաշրջիկ. հանգստի կամ ժամանցի նպատակով զբոսաշրջիկների քանակը 707.171-ն է.

Այս ցուցանիշներից պարզ է դառնում, որ 2016 թվականի համեմատ 2017 թվականին հանգստի և ժամանցի նպատակով ներքին զբոսաշրջության ցուցանիշներն աճել են 6.5%-ով, իսկ 2018 թվականի հունվար-սեպտեմբերին՝ 2017-ի հունվար-սեպտեմբերի համեմատ՝ 7.2%-ով [2]:

Շեշտադրումը կատարված է հանգստի և ժամանցի նպատակով զբոսաշրջիկների վրա, քանի որ հենց նրանց մեջ են այն անձիք, որոնցից ձևավորվում է մեր առաջարկած ենթակառուցածքի թիրախային խումբը: Ներքին զբոսաշրջության քայլարշավասերների և ակտիվ հանգիստ նախընտրողների վերաբերյալ վիճակագրական տվյալները բացակայում են, սակայն ունեցած տվյալների աճի տեմպերը, արահետաշինարարական աշխատանքների ակտիվությունը և այլ գործոնները թույլ են տալիս եզրակացնել, որ ակտիվ հանգիստ ցանկացող տեղացիների քանակը տարեցտարի աճում է:

Ավելի մանրամասն նկարագրությունը թույլ կտա պատկարեցնել մեր կողմից առաջարկվող ենթակառուցվածքի իրական ներուժը և դերը թե՛ ներքին, թե՛ ներգնա զբոսաշրջության բնագավառում: Մեր կողմից առաջարկվող վրանային ճամբարի գլխավոր պայմաններն են՝

1. Բնության գրկում ցանկապատված տարածք.
2. Վրանների, քնապարկերի, կարիմատների և գիշերակացի համար անհրաժետ պարագաների տրամադրում.
3. Լոգարանի և զուգարանի առկայություն.
4. Էլեկտրաէներգիայի առկայություն .
5. Սննդի ձեռք բերման հնարավորության ընձեռնում.
6. Սանիտարական նորմերի պահպանում:

Այս բոլոր չափորոշիչներին համապատասխանող ընդամենը մեկ վրանային ճամբար կա Հայաստանում՝ «Կանչաքար» տուրիստական համալիրը, որը գտնվում է Հախպատ գյուղի նույնանուն հատվածում: Այն իր աշխատանքը սկսել է 2018 թվակիանի հուլիս ամսին և, լինելով դեռևս ոչ լիարժեք կազմավորված, արդեն իսկ գրավել է թե՛ ներքին, թե՛ ներգնա զբոսաշրջիկների ուշադրությունը և սկսել է գործել անսպասելի այցելություններից դրդված: «Կանչաքար»-ը 2018 թվակնի հուլիս-սեպտեմբեր ամիսների ընթացքում հյուրընկալել է 120-ից ավել զբոսաշրջիկների: Այս ցուցանիշները թույլ են տալիս եզրակացնել, որ այս ենթակառուցվածքի պահանջը կա ներկայիս Հայաստանի արկածային զբոսաշրջության կամ ակտիվ հանգստի կազմակերպման բնագավառում [3]:

Ենթակառուցվածքները ստեղծելուց առաջ հարկավոր է հասկանալ վրանային ճամբարի այցելու համարվող անձանց՝ թիրախային խմբի նախասիրությունները և վարքագիծը, դեմոգրաֆիական ընդհանուր կազմը: Մեր կողմից արված ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց, որ «Կանչաքար» տուրիստական համալիրի և, «ՆԱ-ՆԵ» վրանային ճամբարի (գտնվում է Լոռվա մարզի Գարգառ գյուղի մոտ) ծառայություններից օգտված զբոսաշրջիկները հետաքրքրված են քայլարշավներով և լեռնագնացությամբ, այսինքն ակտիվ հանգստի սիրահարներ են, տարիքային խումբը՝ 20-45 տարեկան, մաճամասնության ազգային պատկանելությունը՝ հայեր: Հետաքրքիր մի փաստ ևս՝ «ՆԱ-ՆԵ» վրանային ճամբարը պարբերաբար սպասարկում էր 11-14 տարեկան երեխաների՝ դպրոցական էքսկուրսիաների շրջանակներում: Այստեղից կարելի է հետևություն անել, որ վրանային ճամբարները նպատակահարմար է հիմնել այնպիսի վայրերում, որոնք գտնվում են քայլարշավային երթուղիների հարևանությամբ, կամ գտնվում են հենց այդ երթուղիների, արահետների վրա:

Հայաստանի Հանրապետության գրեթե ողջ տարածքում կան քայլարշավային երթու-

ղիներ, սակայն առավելի երկարները գտնվում են հիմնականում Լոռվա, Տավուշի, Վայոց Ձորի, Սյունիքի և Կոտայքի մարզերում [4] [5]. սրանցով անցնելու համար, հիմնականում մեկ կամ մի քանի գիշերակաց է անհրաժեշտ, և պատահական չէ, որ ներակայումս Հայաստանում գոյություն ունեցող սակավաթիվ վրանային ճամբարները հենց այս մարզերում են տեղակայված։

Արդեն իսկ, ըստ 2017 թվականի դեկտեմբերի 14-ին արձանագրված կառավարության որոշման, դրամական միջոցներ են հատկացվել Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի ց՝ 10 քայլարշավային երթուղիներ մշակելու նպատակով [6]։ Բացի այդ, անցած երեք տարիների ընթացքում, Հայաստանի Հանրապետության տարածքում սկսվել են արահետաշինարարական ծավալուն աշխատանքներ, որոնց գործելաոճը համապատասխանում է միջազգային նորմերին (սրանց աշխատանքների ֆինանսավորվումամն զգալի մասը ստացվում է արտասահմանյան դրամաշնորհներից)։ Այսպիսի ծավալուն աշխատանքներ ներկայումս տարվում են Տավուշի մարզի Դիլիջան ազգային պարկում՝ արահետի միջոցով իրար կապելով Դիլիջանի բազմաթիվ զբոաշրջային դեստինացիաներ, որոնցից են՝ Հաղարծնի և Գոշավանքի վանական համալիրները, Ջուխտակ վանքը, Մաթոսավանքը, Հովեր կոչվող հատվածը, Պարզ լիճը, Գոշի լիճը և այլ զբոսաշրջային արժեք ներկայացնող օբյեկտներ։ Թվարկված հուշակոթողների և բնական հուշարձանների քանակից և միմյանց միջև ընկած հեռավորությունից պարզ է դառնում, որ խոսքը մի քանի տասնյակ կիլոմետր ձգվող արահետի մասին է [7]։ Նմանատիպ երկար և միջազգային նորմերին համապատասխանող արահետները Հայաստանում դեռ շատ չեն, սակայն, ինչպես տեսնում ենք, այս գործունեությունը ակտիվ զարգանում է, և նմանատիպ արահետներն առանց գիշերակացի ապահովման ենթակառուցվածքների, պարզապես շահագործման կենթարկվեն զբոսաշրջիկների փոքր հատվածի կողմից՝ այն մարդկանց կողմից, ովքեր ունեն վրան կամ դրա ձեռք բերման հնարավորություն, համապատասխան ուսապարկ և այլ պարագաներ։ Վրանային ճամբարների ստեղծումը դրական ազդեցություն կունենա նորաստեղծ արահետների վրա, քանի որ նոր թափ կհաղորդի զբոսաշրջության այնպիսի ուղղություններին որոնցից են էկոզբոսաշրջությունը, քայլարշավային զբոսաշրջությունը և լեռնային զբոսաշրջությունը [8]։

Նմանատիպ արահետաշինարարական աշխատանքներ ներկայումս անց են կացվում նաև Վայոց Ձորի, Սյունիքի մարզերում և Արցախում։ Բացի նոր արահետներից Հայաստանի Հանրապետության տարածքում կան բազմաթիվ հին արահետներ և քայլարշավային երթուղիներ, որոնցով անցնելու համար անհրաժեշտ է մեկ կամ երկու գիշերակաց [9]։ Սրանք ստանդարտ և հիմնական արահետներ են, որոնք ներկայումս բարելավվում են մասնավոր ընկերությունների կամ հասարակական կազմակերպությունների կողմից, և հայտնի են բոլոր մասնագիտացված ուղեկցորդներին։ Նրեկայումս թե՛ ներգնա, թե՛ ներքին զբոսաշրջիկների կողմից շահագործվում են հիմնականում վերոնշված հին քայլարշավային երթուղիները, քանի որ դրանք հիմնականում ծանոթ և լիարժեք ուսումնասիրված են ուղեկցորդների կողմից, հետևաբար դրանք են ներառվում զբոսաշրջային առաջարկներում։ Հայտնի է, որ ակտիվ զբոսաշyրջությունը և արկածային զբոսաշրջությունը աչքի են ընկնում իրենց բարձր գնով, որը պայմանավորված է հիմնականում՝

1. ծառայությունների բարձր գներով,
2. պարտադիր պարագաների թանկարժեքությամբ։

Բերված առաջին հանգամանքն ավելի շատ վերաբերում է ներգնա զբոսաշրջիկներին, իսկ երկրորդը՝ առավել զգալի է ներքին զբոսաշրջիկների համար, քանի-որ Հայաստանի Հանրապետությունում նմանատիպ պարագաներ ձեռք բերելը շատ ավելի դժվար է՝ դրանց սակավաքանակության, բրենդների քիչ լինելու, բարձր գների պատճառով, քան, օրինակ, եվրոպական կամ ամերիկյան երկրներում։ Այդ իսկ պատճառով վրանային ճամբարների ստեղծումը, գումարային տեսանկյունից ձեռնտու է ներքին զբոսաշրջիկների համար։ Տրամաբանական է, որ վրանային ճամբարների գնային քաղաքականությունը չպետք է լինի հավասար քայլարշավի համար կարևոր պարագաների վարձույթի գնին, հակառակ դեպքում, նոր ենթակառուցվածքի գաղափարը կգրավի միայն ներգնա զբոսա-

շրջիկներին և շատ քիչ կազդի ներքին զբոսաշրջության ցուցանիշների աճի վրա: Այդ իսկ պատճառով հարկավոր է ընտրել նպատակահարմար գնային քաղաքականություն թե՛ վրանային ճամբարը ստեղծողի, թե՛ զբոսաշրջիկի տեսանկյունից:

«Կանչաքար» տուրիստական համալիրում մեկ անձի համար մեկ օրը, ներառյալ գիշերակացը, արժե 4000 դրամ, որում սնունդը ներառված չէ, իսկ երեք անգամյա սնունդը ներառված՝ 8000 դրամ: Այսինքն զբոսաշրջիկին տրամադրվում է գիշերակացի համար անհրաժեշտ բոլոր պարագաները, զուգարանից օգտվելու և լոգանք ընդունելու, ինքնուրույն սեփական միջոցներով սնունդ պատրաստելու հնարավորություն, ընդամենը 4000 դրամով: Այս ամենը մեկօրյա վարձույթով ձեռք բերելու համար, ներքին զբոսաշրջիկը ստիպված կլինի վճարել «Կանչաքար»-ի առաջարկած վարձավճարից նվազագույնը վեց անգամ ավել: Նմանատիպ գնային քաղաքականություն ունեցող վրանային ճամբարների ստեղծումը, տրամաբանական է, որ գրավիչ կլինի ներքին զբոսաշրջիկների համար, քանի որ քայլարշավերն ու լեռնագնացությունը կդառնա ավելի մատչելի [10]:

Իհարկե նմանատիպ ենթակառուցվածքների ստեղծման գործում մեծ կարևորություն ունի ինչպես մասնավոր, այնպես էլ պետական կառավարումը, քանի որ այսպիսի ենթակառուցվածքների ստեղծումը նպատակահարմար է մասնավոր գործարարներին, սակայն այդ դեպքում ծառայությունների որակի, սանիտարահիգենիկ և այլ նորմերի ապահովման համար հարկավոր է պետական կառավարման մեխանիզմ, որը հնարավոր է գործի դնել լիցենզավորման և վերահսկման միջոցով:

Վրանային ճամբարների առկայության դրական կողմերին մեկն այն է, որ հնարավոր են դառնում բազմօրյա գիշերակացով քայլարշավները այն մարդկանց համար, ովքեր սովոր չեն երեք կամ չորս օրվա սնունդը, վրանը և պիտանի պարագաները տանել իրենց մեջքին կրելով, ավելին, վրանային ճամբարները թույլ կտան պրոֆեսիոնալներին քայլելարշավ անց կացնել ոչ թե երեք կամ չորս, այլ ավելի շատ օրերով: Այստեղից կարելի է հետևություն անել, որ տասնյակ կիլոմետրեր ձգվող արահետների վրա ոչ թե մեկ, այլ մի քանի վրանային ճամբարների անհրաժեշտություն է առաջանում. այսինքն, ըստ գիշերակացերի քանակի, որաշակի կիլոմետրերի հեռավորությամբ կարող են տեղակայված լինեն վրանային ճամբարներ:

Այսպիսի մեծամասշտաբ ծրագրերի իրականացման համար, իրականում, մեծ գումարներ հարկավոր չեն: Այս տարածքներում առանձնապես կառույցների կարիք չկա, առավելագույնը մեկ ադմինիստրատիվ սենյակի անհրաժեշտություն կարող է առաջանալ, իսկ շինությունների բացակայության դեպքում ծախսերը զգալիորեն նվազում են: Հիմնական ծախսը կապված է տարածքի վարձակալման, գիշարակացի և անհրաժեշտ այլ պարագաների ձեռք բերման հետ: Եթե մոտակայքում լինի բնակավայր, ապա էլեկտրաէներգիայի խնդիրը լուծելը բավականին հեշտ կլինի, իսկ բացակայության դեպքում, մեկ արևային սնուցումով մարդկոցը բավական կլինի զբոսաշրջիկներին և տեղի աշխատողներին էլեկտրաէներգիայով ապահովելու համար: Ինչ վերաբերվում է ջրին, ապա Հայաստանը հարուստ է հանքային աղբյուրներով, շատ վայրերում դրանց առկայությունը կօգնի այդ խնդրի լուծման հարցում, իսկ տաք ջուրը կարելի է ստանալ արևի ջերմությունից: Հարկավոր է լավ ճանաչել թիրախային խմբին, քանի որ արշավականները չեն ակընկալում անտառում կամ լեռներում հյուրանոց տեսնել, ավելին, վստահեցնում ենք, որ դա բացասական հետևանքներ կունենա. հարկավոր է չհեռանալ բնությունից, շինարարական աշխատանքներից հնարավորինս խուսափել, պահպանել բնությունը և բացառել ծառահատումները: Վերոնշվածի հաստատման համար օրինակ է ծառայում 2017 թվականին «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Գոշի լճի հատվածում սկսված կառուցապատումն և դրանց ունեցած հետևանքների փորձը [11]:

Նմանատիպ ծրագրերի համար ֆինանսներ կարելի է ձեռք բերել ստարտափային ծրագրեի կամ դրամաշնորհների միջոցով. դրա համար հարկավոր է առավել մանրակրկիտ ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության քայլարշավային երթուղիները, ուսումնասիրել նաև այն հնարավոր երթուղիները, որոնք չեն շահագործվում:

Մի քանի վրանային ճամբարների ստեղծումը մեծ փոփոխություններ կարող է մտցել ներքին զբոսաշրջության ոլորտում, դարձնել ակտիվ զբոսաշրջությունը առավել հանրամատչելի, խթանել արտասահմանում ապրող քայլարշավների սիրահաների Հայաստան այցելությունները: Տասնյակ կիլոմետրեր ձգվող արահատները նմանատիպ ենթակառուցվածքներով համալրելը, Հայաստանի զբոսաշրջության ոլորտը մեկ քայլ առաջ կտանի՝ մշակութային ստանդարտ տուրերից զբոսաշրջության ղեկը մի փոքր թեքելով դեպի էկոզբոսաշրջություն:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության վիճակագրության կոմիտե https://armstat.am/am/ [Hayastani Hanrapetutyan vichakagrutyan komite] [in armenian]
2. Հաշվետվություն Տուրիզմի վարչության ներքին և ներգնա մոնիթորինգի 2016-2018 վարման վերաբերյալ
3. «Կանչաքար». վրանային քաղաք՝ ձորի եզրին» 31.08.2018- https://banks.am [Kanchaqar. Vranayin qaxaq: dzori ezrin] [in armenian]
4. https://aratesmskh.wordpress.com/
5. «Խոսրովի անտառ, Արփի լիճ, Արևիկ ազգային պարկ. Հայաստանը զարկ է տալիս էկոտուրիզմի զարգացմանը». 26.01.2017 - https://armenpress.am [Xosrsvi antar, Arpi lich, Arevik azgayin park. Hayastany zark e talis ekoturizmi zargacmany] [in armenian]
6. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում «Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N 1313-ն որոշման մեջ լրացում եվ փոփոխություն կատարելու եվ հայաստանի հանրապետության տնտեսական զարգացման եվ ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեին գումար հատկացնելու մասին» ընդունված 2017 թվականի դեկտեմբերի 14-ին:
7. «Դիլիջան» ազգային պարկը՝ ավելի գրավիչ ու հարմարավետ», 27.09.2018- https://mediamax.am [Dilijan azgayin parky aveli gravich u harmaravet] [in armenian]
8. Հայաստաի Հանրապետության քայլարշավային արահետներ https://www.wikiloc.com [Hayastani Hanrapetutyan qaylarshavayin arahetner] [in armenian]
9. Հայաստանի Հանրապետության բնապահպանության Նախարարություն http://www.mnp.am [Hayastani Hanrpetutyan bnapahpanutyan naxararutyun] [in armenian]
10. https://www.booking.com/
11. «Զարմանալի էկոտուրիզմ. Գոշ լիճը փորում են», 11.04.2017- https://hetq.am [“Zarmanalai ekoturizm. Gosh lichy porum en”] [in armenian]